Սիրտ որ մանուկ մատաղ տիոց փղձկեալ վառէր ողորմ 'ի լաց,
զԱյր քո ցածուն ողջագուրել, տեղի ծննդեանդ ընդ հեգ հովուաց,
Եւ՝ Ռեթլեհեմ, սիրոյդ ջերմին արեան յորդեաց գետ մեր յաշխարհ,
Աւաղ թաւալ կորիճքն Հայոց, ամ, ուլն 'ի ձիդ գրկեցին մահ։

Ծերն Աբրագաց, Վարագ, Գրդուռ, ընդ Աբոսոսի հառաչք ետուն,
Զոհ են քաջերս, Զոհին անմահ, հա սեգն Մասիս եւս տայ հեծիւն,
Վասպուրական փոյթ 'ի ծագացն, ուստի, Մաղիմ, հասի առ քեզ,
Կարօտդ յոսկերս հիւծեալ 'ի վաղ, թառաչս առ կարմրիկ Յիսուսդ հեզ։

Ընդ վեհ նախնեացս մեծահաւատ, կայծիկ մի եւս յինէն ընկալ,
Որ արդ արտօսր ի կուրծս շրջիմ, զպերճն թողեալ Վան վարդավառ,
Նուիրական որչափ որ քեզ Հայկայ քնար հնչէ Մասսեաց,
Այլ ամ ձայնիկ հիգոյս նուաղ, յայրիդ, Տէր իմ, հողս տայ հառաչ։

Հողոյդ, Մաղիմ, մեռնիմ քարուտ. ուր բոկիկ շուրջ եկ Մեսիան,
Ո՜հ, զի անմեղ դառնուկ Աստուածն, 'ի վերս անմռունչ չեբարձ կական,
Քե՛զ, Գողգոթայդ սարսափելի, զենարան, Է՜հ, ահաւորին,
Կողկող 'ի դէմս յերեսս անկեալ, լիզեմ զքարն՝ արեամբ Փրկչին։

Կուրծքս կարեվեր յոտս Խաչելոյդ կամ, ցօղ աչացս շնորհեա բուժիչ,
Սիրոյդ ծարաւ այրէ մրկէ զսիրտ հիգոյս, բարձեալ ամ ձիչ,
Փուշ պսակիդ և պատանոյդ տամ ես համբոյր, տապանդ 'ի գիրկս,
Ամ, Աստուած իմ, Աստուած Յիսուս, ունայն չդառնամ հեգ Հայրենիքս։

Ցոցով սիրոյդ վառի սիրտ իմ, զոր քեզ նուիրեմ ընդ քնարիս,
Քո սուրբ Շիրմիդ զոհեմ զանձն իմ, Գողգոթայիդ ձօնեմ զհոգիս,
Թագ անթառամ Հայկայ գլխոյն, սուրբդ Յակոբ վեհ Գլխագիր,
Ա՛ռ զիրձս իմ յերիկամանցս, տուր Տեառն հաշտել ընդ մեր երկիր։

Կա՛ց, զի մեկնիմ ես լալագին, թողեալ զվայրդ մշտալոյս,
Այլ ընդ ղեփիւռն Վանայ սարից յուղեմ զհաւատս, զսէր, զյոյս,
Ամ հեռանամ յիմ քաղցր երկիր, Աւետեաց սուրբ, մնա՛, լուսնիկ,
Ի Հայաստան, ցօղեա, Տէր, գութ. թէ ոչ՝ չեն պէտք ինձ կեանք դառնիկ։

Յիշրոսաղէմ, 25 յունիս 1866։

ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ
Մ. Մեսրոպեան վանեցի, յուիսէն Վարագայ։

ՊԱՏՄԱԿԱՆ

Սորագրութիւն ողբերգութեան Տ. Գրիգորի Շղթայակրի Պարիսրդի Ս. Աբոսոյ՝ Յիշրոսաղէմ ի Կ. Պոլիս։

(Տես թիւ 8. էջս 122։)

Լուսանտի գնացաք ի սուրբ Աստուածածնի եկեղեցին, և անդ լուսաքզմահ Տեառն Աբրահամու հայրապետին թէքիրտաղցւոյ, որ ի սուրբ Էջմիածին ի նոր կիրակէին առ Աստուած փոխեալ և թաղեալ են ի Հոզակաթ. հոգւոյ նորա Աստուած ողորմի։ Լուսանտի գնացաք Յուսկուտար. և յետ քանի աւուրց վասն տօնի գիւտի Նշխարաց սրբոյն Գրիգորի

digitised by A.R.A.R.@

մերոյ Լուսաւորչին ի Պալեստինա գը-
նացաք. և անտի ելեալ եկաք Յիսու-
կուտար ի վանքն մեր. զոսն Պարդա-
վառին անդ կատարեցաք. մեղաւորս
ժամարար։

Եւ մինչդեռ անդ էաք, ի սուրբ
Էջմիածնայ երկու վարդապետք ե-
կին՝ Թովմայ և Մկրտիչ անուամբ, և
նուիրակն և պարոն Ալիքն և այլք.
յետոյ և մեր Մահտեսի Աղայքն, և
բազմակնիք մահղար մի եդին առաջի
մեր, յորում զմեզ խնդրեալ էին լի-
նել Կաթուղիկոս. և իմ երեք օր պայ-
ման խնդրեալ՝ զնոսա յղեցի. բայց
Պատրիարք վարդապետին և մեր մահ-
տեսացն ի ծածուկ ասացի, թէ այս
երեք անգամ եղեւ որ վասն այսմ իրի
զմեզ խնդրեն. բայց անհնար է ինձ
լինել, զի անարժան եմ։ Եւ զկնի ե-
րից աւուրցն եկաք ի սուրբ Աստուա-
ծածնի եկեղեցին, և յայտնի առաջի
ամենեցուն հրաժարեցայ, և յոչ ա-
սելն իմ, ապա այն եկող վարդապետ-
քըն բերին և մահղար մի այլ գրեալ՝
թէ նա յանձն չառնու և չլինի, զնահ-
կեցի Պազար վարդապետն կը խնդ-
բեմք և ոչ զայլ ոք։ Եւ յետ բազմաց
ասից և խօսից, կնքեցի մեղաւորս
նախ զհաւանութեան գիրն, որ եւ
ի վերայ նորա հաստատեցաւ Կաթու-
ղիկոսութիւնն։ Եւ իմ ելեալ անտի
փութով գնացի Յիսուկուտար, զի մի
ըստ ոչն բազմացի, և զմահղարն յիզմիր
յղեցաք առ Պազար վարդապետն,
զի ելեալ գնասցէ ի սուրբ Գոհն։

Եւ յետ աւուրց ինչ անցելոց՝ յօրն
ուրբաթ, որ ի վաղիւն Լիփեսոսի Ս.
ժողովոյն տօնն էր, Պայմախամ Լիկէն
Մէհմէտ փաշան, որ նախ մաքսա-
պետ էր, թելադրութեամբ լատի-
նացւոց մեծին սատանիկ հրաման յղե-
եալ էր առ Պատրիարք վարդապետն,
թէ ի Հայոց եկեղեցիսն պատուէր
տուր, զի զՍիվ հրաշալեոյ յետին ե-
բեք տուն շարականն մի ասիցեն, և
նա յահէ պատուէր ետ չասել. որ և
զամենայն ոչ ասացին. և Սիվ հրաշա-
լի ասելն խափանեցաւ ի Յոտամպօլիս,
և եղեւ այն չար սովորութիւն. և մեք
յայնմ գիշերի յեկեղեցին ոչ գնա-
ցաք, այլ արտմութեամբ և լալով
զօրն անցուցաք։

Եւ ի պահոց երեքշաբաթին քա-
հանայք և եկեղեցականք եկին ըզ-
մեզ հրաւիրեցին ի տօն սրբոյ եկե-
ղեցւոյ. և ի չորեքշաբթի միամիտ ել-
եալ գնացաք ի սուրբ Աստուածածնի
եկեղեցին, և տեսաք զաղաղակն եւ
զշփոթ յոյժ ի մէջ նոցա վասն ոչ ա-
սելոյն զերեք տուն. և մինչեւ խա-
ղաղութիւն եղեւ՝ Աստուծոյ է գի-
տելի՝ թէ զինչ կրեցաք։ Եւ զսուրբ
տօն Վերափոխման մօր Տեառն անդ
կատարեցաք. և եկաք ի Պալատու
սուրբ Հրեշտակապետաց եկեղեցին,
և կրկին փութով անտի եկաք ի սուրբ
Աստուածածնի եկեղեցին առ ի տե-
սանել զուխտաւորաց նաւի պատ-
բաստութիւնն։ Եւ ի սեպտեմբերի
երեք ի տօնի Լիկիոյ ժողովոյն սրբոյ՝
Աստուծով նաւն ելև գնաց. և ինոյն
օրն լուաք թէ Յիսուկուտար կեսարա-
ցիք քանի մի ոգիք զՍիվ հրաշալին ա-
սացեալք են յեկեղեցին. և իմացուց-
եալ բռնաւորին՝ վեց հոգի ի Գոլդէն
ետ, ահ արկանելով համայնից։ Եւ
մեք ի սուրբ Հրեշտակապետն եկաք,
և իշխանաբ գնացաք ի Բաղբեթխա-
նայն, և զամենայն քայքայեալ շին-
ուածն տեսաք, և զարմացմամբ հի-
ացաք ընդ բազում խարջի- կերտումն
և ընդ վաղվաղակի աւերումն։ Եւ
զկնի աւուրց ինչ հրաւիրմամբ սուրբ
Գէորգայ եկեղեցւոյ քահանայից եւ
իշխանաց ի սեպտեմբերի տասն եւ
հինգ եկաք անդ, և խաչ գիւտի կի-

digitised by A.R.A.R.@

բակին գնացաք ի մահտեսի Մեղբեստրոս աղայի Եալին. երկու օր անդ մնալով, և գնացաք Յուսկուտար. և անտի ի նոյեմբերի չորս եկաք ի Պալատու եկեղեցին, զոսն սրբոյ Հրեշտակապետացն անդ կատարելով. եւ յետոյ զաղքատութիւնս մեր նոցա յայտնեցաք, և յօրն կիրակէին ծանուցմամբ սկսաք խմպաթիէ հաւաքել. զոր Տէրն ամենայնի զբարին յաջողեսցէ. ամէն.

Եւ մինչդեռ աստ ի Պալատն էաք, ի դեկտեմբերի տասն, Սոկէդրէ խոց մեծն դարձեալ ի պատերազմէն՝ ընդ երեկս եմուտ ի քաղաքս. և ի սոյն ամսոյ տասներկու օրն, փոխանորդն արքայի՝ Մոհսուն օղլի կոչեցեալն մեծ սանձախով երեւելի փառաւք եւ ալայի- եմուտ ի քաղաքս, և գընաց ի պալատն արքունի, և այլ ոչ ել, զի առին զսանձախն և զկնիքն ի նըմանէ, և յընչից մերկացուցեալ՝ տարագրեցին ի Սելէնիկ. և փոխանակ նորա եղեւ ժանտն խայմախամ՝ հակառակն մերս եկեղեցւոյ և օրինաց. և զարմանք կալաւ զամենեսին։ Եւ ի սոյն ամսոյ, ի կիրակի լոյս երկուշաբթի, ի չորրորդում ժամու գիշերոյն յարեւելեան կողմն սրբոյ Հրեշտակապետաց եկեղեցւոյն մերձ եղեւ սաստիկ էանդուն, և բազում տունք և խանութք և մահտեսի Մելքոնի տունն այրեցան. բայց շնորհօքն Աստուծոյ և բարեխօսութեամբ մեծաց սրբոց Հրեշտակապետացն՝ սուրբ եկեղեցին ազատեցաւ, և գոհացաք զԱստուծոյ. և մեք զոր ինչ ժողովեալ էաք տուաք սուրբ եկեղեցւոյն, չորս հարիւր ղուրուշ, զի այնպէս խոստացաք յայնմ ժամու նեղութեան, և Աստուծով կատարեցաք։ Եւ անտի ելեալ դատարկ և խղճուկ եկաք ի նոր Աստուածածնի եկեղեցին, և զոսն սուրբ Օհաննէսեան Տեառն մերոյ անդ կատարեցաք ընդ առաւօտն. մեզաւորս ժամարար։

Եւ ի յունվարի ինն գնացաք ի սուրբ Գէորգայ եկեղեցին, և ի նոյն ամսոյ քսանի լուսաբ թէ ֆէրմանով չէ՞ գնաց Յերզրում առ ի բերել էհլիարով աստ զԿաթողիկոսացու Պազար վարդապետն. զի տեղւոյ փաշայն ոչ է թողեալ գնալ ի սուրբ Էջմիածին, թէ ֆէրման ոչ ես առեալ գնալոյ. անդ արգելեալ և աստ արդ արարեալ. վասն որոյ գնացին ի բերել ի Սամսիոլ. և մեր ի սուրբ Աստուածածնի եկեղեցին եկեալ շատ աշխատեցաք առ ի դարձուցանել զչէ՞ն կաշառս բազում խոստանալով, և չեղեւ հնար։ Եւ ի փետրվարի երկու լուսաբ թէ ըմբռնող փաշայն մեռեալ է, և ինքն ազատեալ գնացեալ է. և հասեալ անդ՝ ձեռնադրեալ Կաթողիկոս և նստեալ ի սուրբ Աթոռն. փառք փրկողին։

Ի յաջորդն։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Յուլիս ամսոյ 6 ին Աւստրիոյ Վեհափառ Կայսեր Ֆրանսոա Յոզէֆ Ա. տարեդարձը խիստ փառաւորութիւնք կատարեցաւ ի սուրբ քաղաքս նոյն տերութեանը հոյակապ հիւպատոսարանին մէջ։ Երուսաղէմի վեհափայլ կառավարիչը ոչ միայն ի պաշտօնէ այցելութեան երթալով սովորական բարեմաղթութիւնները ըրաւ, այլեւ զինուորական երաժշտաց խումբը խրկած էր հոն, որ գեղեցիկ ներդաշնակութեամբը թէ ըզհանդիսաւորները զուարճացոյց եւ թէ մեծ պատիւ ըրաւ բարեկամտերութեան ներկայացուցիչ մեծապա-

digitised by A.R.A.R.@